



«Աշխատանք Արցախցուն» #Գործկա

2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Արցախի Հանրապետության խաղաղ բնակչության նկատմամբ սանձազերծված պատերազմը ստիպեց Արցախի բնակչության մի մասին իրենց և իրենց երեխաների կյանքը փրկելու համար լքել հայրենիքը և ապաստանել Հայաստանում: Հայաստանի և Մփյուռքի մեր հայրենակիցների աջակցությամբ Հայաստանում արցախցիները ապահովված են կացարաններով, սնունդով, հագուստով, դեղորայքով և այլ անհրաժեշտ պարագաներով: Անշուշտ, արցախցի մեր հայրենակիցները շրջապատված են ուշադրությամբ և հոգատարությամբ, և մենք բոլորս միահամուռ փորձում ենք օգնել և աջակցել մեր հայրենակիցներին:

Սակայն, յուրաքանչյուրս գիտակցում ենք, որ արժանապատիվ կյանք ունենալու գրավականը աշխատանքն է:

Այսպիսով, գիտիակցելով մեր բոլորիս առջև ծառայած լրջագույն խնդիրները, Հայաստանի ՄԹ Ասոցիացիայի հետ համատեղ սկիզբ դրվեց «Աշխատանք Արցախցուն» նախաձեռնությանը, որը հետապնդում է երկու նպատակ.

- I. Կարճաժամկետ նպատակն է օգնել արցախցի մեր հայրենակիցներին Հայաստանում բնակվելու ընթացքում գտնել աշխատանք և ապահովել իրենց և իրենց երեխաների առօրյա կարիքները:
- II. Երկարաժամկետ նպատակն է մեր հայրենակիցներին զինել սոցիալական, ձեռնարկատիրական՝ փոքր և միջին բիզնես սկսելու և զարգացնելու, ինչպես նաև այլ հմտություններով՝ Արցախ վերադառնալուց հետո իրենց հայրենիքը շենացնելու և զարգացնելու համար:

Նախաձեռնությունն իրականացնելու համար արդեն իսկ միավորվել են 20 և ավել նվիրյալ կամավորներ, ովքեր շատ արագ անցել են աշխատանքի: Կամավորների ջանքերի շնորհիվ բացվել է համանուն [Ֆեյսբուքյան խումբ](#), որտեղ տեղադրվում են տարբեր աշխատանքային հայտարարություններ, ինչպես նաև աշխատանք փնտրող արցախցիների գրառումներ: Խմբին զուգահեռ հավաքվել է աշխատանք փնտրողների առցանց շտեմարան, քարտեզագրվել են նրանց բնակության վայրերը, աշխատանքային նախընտրություններ, մասնագիտական կարողություններ: Նախաձեռնության կամավորները կապ են ստեղծում աշխատանք փնտրող արցախցիների և այն գործատուների միջև, որոնք պատրաստ են միանալ նախաձեռնությանը և աշխատանքով ապահովել մեր հայրենակիցներին:

Հրավիրում ենք Հայաստանի բոլոր գործատուներին միանալ «Աշխատանք Արցախցուն» կամավորական նախաձեռնությանը՝ լրացնելով գրանցման [հայտը](#)՝ աշխատանքով ապահովելով արցախցիներին և հնարավորություն տալով նրանց Հայաստանում բնակվելու ընթացքում կազմակերպել իրենց և իրենց երեխաների արժանապատիվ առօրյան:

«Աշխատանք Արցախցուն» նախաձեռնությանը միանալու հետ կապված հարցերով խնդրում ենք կապ հաստատել Լուսինե Ստեփանյանի հետ՝ 091569689 հեռախոսահամարով կամ էլ. փոստի միջոցով՝ Lstepanyan82@gmail.com

Lstepanyan82@gmail.com

091 56 96 89

<https://bit.ly/3pML61k>



Job opportunities for the residents of Artsakh

On September 27, 2020, Azerbaijan and Turkey launched a large-scale war against peaceful population of Artsakh Republic, which forced them to leave their motherland and to find asylum in Armenia temporarily to save their own lives and lives of their children. By the support of our fellow compatriots from Armenia and Diaspora, the residents of Artsakh are provided with shelter, food, clothes, and medicaments and with other necessities in Armenia. Surely, our compatriots from Artsakh are surrounded with care and attention and we are united to support our compatriots.

Nevertheless, we all realize that the guarantee for a decent living is employment.

By realizing the serious problems, we face today, together with Armenian HR Association, we have recently launched an initiative “**Job opportunities for the residents of Artsakh**” which has two main objectives:

- Firstly, the short-term objective is to help our compatriots from Artsakh to find employment while residing in Armenia and to secure their and their children’s daily needs.
- Secondly, the long-term objective is to equip our compatriots with social, entrepreneurial and other skills to launch and develop small and mid-level businesses in order to develop and prosper in Artsakh, upon their return.

For the implementation of the initiative, already more than 20 volunteers have united their efforts to started the implementation of this initiative. Due to their efforts, [Facebook group](#) (Աշխատանք Արցախցուն – Jobs for Artsakh people) has been created where various job announcements and requests from job seekers from Artsakh are being posted on a daily basis. Parallel to the group, online repository of job seekers, including their place of residence, job preferences and professional skills has been collected. The group of volunteers create link between job seekers from Artsakh and those employers who are ready to provide employment to our compatriots.

We call for all employers in Armenia to join our volunteer initiative by filling in the [registration form](#) to secure job for the residents of Artsakh and provide them with the opportunity to earn decent living together with their children.

For queries regarding the initiative, please contact Lusine Stepanyan **091569689** or at Lstepanyan82@gmail.com